Ուժի մեջ է 2018թ. հոկտեմբերի 27-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

26 հոկտեմբերի 2018թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, «ACBA ON-LINE» համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅՈՒՆ	
35. ՀՀ պետական պարտատոմսերի դեպո հաշիվների բացում և սպասարկում	
- արժեթղթերի հաշիվների (դեպո) բացում և փակում	անվճար
- դեպո հաշիվների սպասարկում (պահառության վճար)	անվճար
- դեպո հանձնարարականի կատարում	անվճար
- դեպո հաշիվներից քաղվածքների և այլ տեղեկանքների տրամադրում	անվճար
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]	
36. Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցում	
36.1. ՀՀ պետական արժեթղթերի առաջնային շուկա՝	
- մինչև 100 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.1%, նվազագույնը 12 000 ՀՀ դրամ
- 100 մլն ՀՀ դրամից ավելի	գործարքի գումարի 0.08%
36.2. ՀՀ պետական արժեթղթերի երկրորդային շուկա՝	
- մինչև 100 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.06%, նվազագույնը 6 000 ՀՀ դրամ
- 100 մլն ՀՀ դրամից ավելի	գործարքի գումարի 0.04%
36.3. Կորպորատիվ արժեթղթերի շուկա՝ (բացառությամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոսմերի)	
- մինչև 100 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.24%, նվազագույնը 6 000 ՀՀ դրամ, +բորսայի միջնորդավճար
- 100 մլն ՀՀ դրամից ավելի	գործարքի գումարի 0.18% +բորսայի միջնորդավճար
36.4. «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսերով գործառնություններ	
- մինչև 10 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.12%, նվազագույնը 1 200 ՀՀ դրամ
- 10 մլն ՀՀ դրամից մինչև 50 մլն ՀՀ դրամ	գործարքի գումարի 0.1%
- 50 մլն ՀՀ դրամից ավելի	գործարքի գումարի 0.06%

[1] Արտարժույթով արտահայտված արժեթղթերով գործարքների դեպքում դրամային համարժեքը հաշվարկվում է գործարքին նախորդող օրվա ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող միջին փոխարժեքով: